Լենինը, զարգացնելով Մարքսի մտքերը,  
ասում է.

«Պետութեան լիակատար մահացման  
անտեսական հիմքն է հանդիսանում կո-  
մունիզմի այնպիսի բարձր զարգացումը,  
վորի պայմաններում չքանում է մտավոր  
ու ֆիզիկական աշխատանքի հակադրու-  
թյունը, անհետանում է, հետևաբար,  
ժամանակակից հասարակական անհավա-  
սարութեան կարևորագույն աղբյուրներէց  
մեկը և այն ել այնպիսի մի աղբյուր,

<sup>1</sup> Մարքս, Գոթայի ծրագրի քննադատութիւնը,  
հջ 28, ուսս. Կոնստանտ, 1933 թ.:

վորը վոչ մի կերպ չի կարելի մեկեն վե-  
րացնել միայն արտադրութեան միջոցների  
հանրային սեփականութեան անցնելով,  
միայն կապիտալիստների ունեղըրկ-  
մամբ...

Պետութիւնը լիովին կկարողանա մա-  
հանալ այն ժամանակ, յերբ հասարակու-  
թյունը կիրագործի «յուրաքանչյուրն ըստ  
ունակութունների, յուրաքանչյուրին  
ըստ պահանջմունքների» կանոնը, այ-  
սինքն, յերբ մարդիկ այնքան կվարժվեն  
համակեցութեան հիմնական կանոնները  
պահպանելուն, և յերբ նրանց աշխատան-  
քըն այնքան արդյունավետ կլինի, վոր  
նրանք կամավոր կաշխատեն ըստ ունա-  
կութունների»<sup>1</sup>:

Կոմունիստական հասարակութեան յերկու  
փուլերի այդ բնութագրերից, վոր ամէլ են  
գիտական սոցիալիզմի մեծ հիմնադիրները,  
յերևում է, վոր այդ փուլերի միջև վոչ մի

<sup>1</sup> Լենին, հ. XXI, էջ 434, ուսս. 2-րդ հր.

Հակադրությունն չկա և չի կարող լինել՝ Նրանց միջև դոյությունն չունի և վո՛չ մի պատմե՛չ, վորի վրայով կարիք լիներ թուչե-լու, կամ վորը կարիք լիներ խորտակելու կոմունիստական հասարակության առաջին աստիճանից յերկրորդ՝ ավելի բարձր աս-տիճանին անցնելու համար:

Սակայն այդ յերկու աստիճանների միջև տարբերությունները մեծ են և հավանորեն հետագայում, դարդացմանը զուգընթաց, այդ տարբերություններն ավելի ևս աչքի կընկնեն:

Բայնական ե միայն համեմատել այն հա-սարակությունը, վորտեղ պահպանվում է պետականությունը, վորտեղ դեռ կարիք կա վոչ միայն պահպանելու, այլև պատվաստե-լու, ամբասնդելու ուժեղ կարգապահու-թյունը վորպես անհրաժեշտ աստիճան հա-սարակության բոլոր անդամներին դաստիա-րակելու և կոմունիստական գեմոկրատիա-յին անցնելու համար, այն հասարակությու-նը, վորտեղ պետությունը պահպանում է

Հանրային սեփականությունը և ամենախիստ վերահսկողություն է կատարում աշխատան-քի չափի ու սպառման չափի նկատմամբ, — այդ հասարակությունը համեմատել կոմու-նիստական, առանց պետության հասարա-կության հետ, վորտեղ հակադրություն չկա մտավոր ու Ֆիզիկական աշխատանքի միջև, վորտեղ համակեցության կանոններն ու նորմաները սովորություն են դարձել, վորտեղ աշխատանքը վոչ թե պարտակա-նություն է, այլ կյանքի առաջին պահանջ-մունքն է, վորտեղ արտադրողական ուժերի վիթխարի զարգացումը և հանրային հա-րըստության աճումը թույլ են տալիս իրա-դործելու «յուրաքանչյուրից լրատ ունա-կությունները, յուրաքանչյուրին ըստ պա-հանջմունքների» սկզբունքը:

Լիակատար կոմունիստական հասարակու-թյունը ներկայացնում է այնպիսի հոյա-կապ, փառահեղ, կատարյալ հասարակական շենք, նա նշանակում է ազատագրված մարդկության մտքի, կամքի ու կուլտու-

րայի յայնպիսի լիակատար Հաղթանակ, վոր բուրժուականն, մանր-բուրժուական քաղաքապետներէ, գիտնականներէ և քաղքենիներէ խղճուկ Փանտագիան ի վիճակի չե բարձրանալու՝ գեթ մի ակնթարթ տեսնելու համար այդպիսի հասարակութեան գոյութեան հնարավորութեանը: Ուստի և այլ տեսակ մարդկանց բոլոր դատողութեանները կոմունիստական հասարակութեան ստեղծման սահմանափակում են չարախնդութեամբ՝ իբր, ի՞նչ կղճսոնա նման հասարակութեանը, յետե նրա անդամներէց ամեն մեկի խելքին փչի հանրային պահեստներէց վերցնել յերկու-հարյուրական թաշկինակ և մեկական դյուստին հեծանով: Այստեղ կարող ե լինել միայն մի պատասխան.—խողի համար ամբողջ աշխարհը խող ե յերևում:

Իդեոլոգիա մատակարարող — վաճառող բուրժուական և սոցիալ-դեմոկրատական մարդուկներէ խղճուկ, սահմանափակ Փանտագիային ջախջախիչ հարված հասցվեց նրանով, վոր աշխարհում ծնվեց, գոյու-

թյուն ունի և ամբանում ե պրոլետարական գիկտատուրայի պետութեանը, վոր այդ պետութեանն արդեն ալարտում ե սոցիալ-լիպի կառուցումը և այդպիսով թեակոխում ե կոմունիստական հասարակութեանն առաջին փուլը: Այն գործը, վոր բուրժուազիան հայտարարել եր վորպես անիրագործելի ցնորք և ուտոպիա, իրականացվում ե կյանքում: Նույնպես ել անխուսափելիորեն կիրադործվի նաև այն մեծ յերազանքը, այն մեծ նպատակը, վորը վողեողել ե պրոլետարներէ ու բոլոր ճնշվածների տասնյակ տերունդներ, վորը գիտական սոցիալիզմի հանճարեղ ստեղծողները՝ Մարքսը և Ենգելսը, Լենինը և Ստալինը գծադրել են պրոլետարական հեղափոխութեան դրոշի վրա—լիակատար կոմունիզմի կառուցումը:

Լիակատար կոմունիզմը կանի, կգարգանա սոցիալիստական հասարակութեանց, վորից նրան չի բաժանում վո՛չ մի պատեհ, վո՛չ մի արմատական հակադրութեան: Թե՛ մեկ և թե՛ մյուս հասարակութեանը կոմուն-

նիստական են, վորովհետև և՛ այնտեղ, և՛ այստեղ զոյուլթյուն ունի արտադրութեան միջոցներէ հանրային սեփականութեան ու չկան դասակարգեր :

«Վորչափով վոր ընդհանուր սեփականութեան են դառնում արտադրութեան միջոցները, այդ չափով ել «կոմունիզմ» բառն այստեղ ևս կիրառելի յե, յեթե չմոռանանք, վոր այդ լիակատար կոմունիզմ չէ»<sup>1</sup>, —ասում ե Լենինը, բնորոշելով սոցիալիստական հասարակութեանը :

Բախական ե, որինակ, համեմատենք սոցիալիզմն ու կապիտալիստական հասարակութեանը, վոր տեսնենք այդ հասարակական սիստեմներէ վճողական սկզբունքային, արմատական տարբերութեանը և համոզվենք, վոր այն հասարակարգից, վոր կոչվում ե և ե՛ կապիտալիստական ստրկութեան, բուրժուական պետութեան,

մասնավոր սեփականութեան, դասակարգային խիստ բաժանման և դասակարգային սուր կռիւ հասարակարգ, չի կարող լինել այլ անցում, բացի պրոլետարական հեղափոխութեանը, բացի քաղաքացիական պատերազմը, պրոլետարական ղեկաւորութեան նվաճումը, վորի դարաշրջանը հանդիսանում ե դասակարգերի ամենասուր և ամենաանողոք կռիւ դարաշրջանը :

Սոցիալիզմից կոմունիզմին անցնելն ամենելն չի կարող նմանվել կապիտալիզմից սոցիալիզմին անցնելուն :

Վորովհետև սոցիալիզմն ինքը սոսկ մի աստիճան ե դեպի լիակատար կոմունիզմը, վորովհետև սոցիալիստական հասարակութեան մեջ արդեն չկան դատակարգեր և նա հանդիսանում ե ազատ և իրավահավասար աշխատողներէ միութեան, վորոնք միատեղ են տիրապետում արտադրութեան միջոցներին և գիտակցորեն այդ արտադրութեանն ուղղում են ընդհանուր բարիքին :

Ուստի չի կարելի պատկերացնել, վոր

<sup>1</sup> Լենին, Կ. XXI, էջ 438, սուս, 2-րդ հր.

մենք հասնելով սոցիալիզմին—նույնիսկ յեթե ԽՍՀՄ-ի միջազգային դրուժթյունը նախկինը մնա—կանգ կառնենք, կդուրենք միևնույն տեղում, փոխանակ շարունակեցու մեր առաջընթացը դեպի կոմունիզմ :

Հենց սոցիալիզմն է տեղծում նոր, վիթխարի կենտրոնացված թյուններ արտադրողական ուժերի դարգացման համար :

Բոլոր ձեռնարկությունների փոխարկումը հանրային սեփականության, ագրոնոմիայով, նորագույն տեխնիկայով և քիմիայով զինված խոշոր սոցիալիստական հողագործության կազմակերպումը, արտադրության պլանային դեկավրությունը, շահագործման բացակայությունը, սոցիալիստական հասարակություն կառուցողների խանդավառությունը, բուրժուազիայի և կալվածատերերի շոտյ սպառման բացակայությունը—այս ամենն արդեն յերևան յեկամ մեր յերկրում, իր արտահայտությունը գտավ տնտեսական զարգացման՝ վողջ աշխարհը զարմացնող տեմպերով, սոցիալիստական

տական ինդուստրիայի տիտաններին, նոր քաղաքներին շինարարության տեմպերով, աշխատավորության բարեկեցության աճումով :

Այդ տեսակետից հարկավոր է նշել գյուղատնտեսությունը, վորն ամենահետամնաց ճյուղն էր և անհատական տնտեսության զոյության պայմաններում զուրկ էր ընդլայնված վերարտադրության հարավորությունից :

Այժմ — 1935 թվականին — մենք կարող ենք ասել, վոր վերելքի ու վազքի ժամանակաշրջանն արդեն սկսվել է նաև գյուղատնտեսության մեջ : Վերջին տարիների հարուստ բերքերը, այն փաստը, վոր 1935 թվին գյուղատնտեսությունն իր արտադրանքի աճման տեմպով գրեթե համոզմ է արդյունաբերության մակարդակին և այն էլ մեր՝ սոցիալիստական արդյունաբերության մակարդակին, վորն աչքի յե ընկնում իր արտադրանքի ամնան անհամեմատ բարձր մակարդակով, — այս ամենը վկայում է

այն մասին, վոր սոցիալիստականորեն վերակազմված գյուղատնտեսութեան բնագավառում ևս սկսվում է արագ շարժում դեպի առաջ:

Սյդպիսով, այն պատկերացումը, թե մենք կարող ենք մնալ վորեւէ ետապում, կոնգ առնել, հանկարծ սկսել դուրս միւլենույն տեղում, դա անհեթեթ, վոչ մարքսիստական, բացարձակապէս անհիմն պատկերացում է, սոցիալիզմի նկատմամբ բուրժուական հայացքների յուրահատուկ գիլըտոց է:

Հատկապէս՝ սոցիալիզմից կոմունիզմին անցնելու մասին խոսելով, Լենինը նկատում է.

«Սակայն կարևոր է պարզ հասկանալ, թե ինչպէս անսահման կեղծ է սովորական բուրժուական այն պատկերացումը, թե իբր սոցիալիզմն ինչ-վոր մեռած, քարացած, ընդմիջտ տրված մի բան է, մինչդեռ իրոք միւլիայն սոցիալիզմից

կսկսվի արագ, իսկական, իրոք մասսայական, բնակչութեան մեծամասնութեան, իսկ այնուհետև ամբողջ բնակչութեան մասնակցութեամբ տեղի ունեցող առաջընթացը հասարակական և անձնական կյանքի բոլոր ասպարեզներում»<sup>1</sup>:

ԽՍՀՄ-ի փորձը, հատկապէս առաջին և յերկրորդ հնգամյակների տարիների փորձը, փայլուն կերպով հաստատում է այդ դրույթը: Մեզ մոտ սկսվել է ու տեղի յե ունենում հենց այդ մասսայական առաջընթացը հասարակական և անձնական կյանքի բոլոր ասպարեզներում: Յեվ այդ շարժումն արագանում է, ընդգրկում է աշխատավորների նորանոր խավեր և բարձրացնում է նրանց դեպի գիտակից կուլտուրական կյանք:

Արժե հիշեցնել, որինակ, այն հեղաշրջումը, վոր տեղի ունեցավ գեղջուկ կնոջ դրութեան մեջ՝ կոյտնտեսութեանների կազ-

1 Լենին, Տ. XXI, էջ 439, ռուս. 2-րդ հր.

մակերպման կապակցութեամբ, այն հեղա-  
շրջումը, վորը բառացի կյանքի կոչեց  
մարդկութեան մի ամբողջ խավ—դեղջուկ  
կանանց, վորոնք դարեր շարունակ տառա-  
պել են կրկնակի ստրկութեան լծի տակ՝  
ճորտատիրական — կապիտալիստական կար-  
գերի լծի տակ և ընտանեկան ստրկութեան  
լծի տակ, — հասկանալու համար սոցիալիս-  
տական վերափոխութեանները խորութեա-  
նը :

Մեր յերկրում արագացող մասսայական  
այդ շարժումը, վորին ղեկավարում է մեր  
կոմունիստական կուսակցութեանը, ընթա-  
նում է և պետք է ընթանա միմիայն կո-  
մունիզմի ուղղութեամբ :

«Յեվ, —ասում է Լենինը, — արտադրու-  
թյան միջոցների տիրապետութեան  
նկատմամբ հասարակութեան բոլոր ան-  
դամների հավասարութունը, այսինքն՝  
աշխատանքի հավասարութունը, աշխա-  
տավարձի հավասարութունն իրագործե-

լուց անմիջապես հետո՝ մարդկութեան  
առջև ամխառնափելիորեն կժառանգ այն  
հարցը, վոր պետք է ավելի հեռու գնալ՝  
ձևական հավասարութունից դեպի փաս-  
տական հավասարութուն, այսինքն՝ դե-  
պի «յուրաքանչյուրից ըստ ունակու-  
թյունների, յուրաքանչյուրին ըստ պա-  
հանջմունքների» կանոնի իրագործումը» :

Հոկտեմբերյան հեղափոխութեանից ան-  
միջապես հետո միջով դատակարգային կըր-  
վի ամենադժնդակ պայմաններում, Բրեստի  
ամենածանրագույն հաշտութեանը կենքելու  
պահին՝ քայքայման վիճակում գտնվող  
յերկրում, Լենինը, VII համագումարում  
հանդես դառնալով կուսակցութեան ծրագիրն ու  
անունը վերանայելու հարցով, ասել է .

«Մյուս կողմից, սկսելով սոցիալիստա-  
կան փոխակերպութեանները, մենք պետք

1 Լենին, հ. XXI, էջ 439, սուս. 2-րդ հրո-  
Շղագիրը մերն է — Ս. Ս.

ե պարզ կերպով մեզ առաջադրենք այն նպատակը, վորին ուղղված են, վերջիվերջո, այդ փոխակերպութիւնները, այսինքն՝ կոմունիստական հասարակութիւն ստեղծելու նպատակը, հասարակութիւն, վորը չի սահմանափակվում միայն Փաբրիկաների, գործարանների, հողի և արտադրութեան միջոցների եքսպորտըրիացիայով, չի սահմանափակվում միայն պրոդուկտների արտադրութեան ու բաշխման խիստ հաշվառումով ու վերահսկողութեամբ, այլ ավելի յե առաջ գնում գեպի հեռեկալ սկզբունքի իրագործումը.—յուրաքանչյուրից ըստ ունակութիւնների, յուրաքանչյուրին ըստ իր պահանջմունքների: Ահա թե ինչու կոմունիստական կուսակցութեան անունը գիտակցանորեն միակ ճիշտն է»<sup>1</sup>:

Մեր կուսակցութիւնը, վորը լենինի նախաձեռնութեամբ ընդունեց կոմունիս-

տական կուսակցութեան անունը, անշեղորեն իրականացրել և իրականացնում է լենինի այդ ցուցումը: Մեր կուսակցութիւնը սոցիալիստական իր բոլոր վերափոխումներով հետադնում է հիմնական այն նպատակը, վորի համար նա ստեղծվել է, այն է՝ կառուցել կոմունիստական հասարակութիւն, համեմել լիակատար կոմունիզմին:

Կուսակցութիւնը, ընկեր Ստալինի ղեկավարութեամբ, հսկայական աշխատանք կատարեց յերկիրը սոցիալիստական վերահաստեղծման յենթարկելու ուղղութեամբ, կոմունիզմին թշնամի դասակարգերի մոացորդները ջախջախելու և վերացնելու ուղղութեամբ ու աշխատավորներին կիպ մոտեցրեց կոմունիստական հասարակութեան ստացին աստիճանին — սոցիալիզմին:

Մենք ավարտում ենք պրոլետարական պայքարի ամենադժվարին ու ամենաբարդ ժամանակաշրջանը—մեր անցումը կապիտալիզմից դեպի սոցիալիզմ: Անցման ժամա-

<sup>1</sup> Լենին, Տ. XXII, էջ 446, հայ. հր 1932 թ.:

նակաշըջանի թե՛ պրակտիկան, թե՛ Լենինի ու Ստալինի ստեղծած թեորիան և ստրատեգիան ամենաարժեքավոր մուծանքն են գիտական սոցիալիզմի գանձարանը, պրոլետարական հեղափոխության և պրոլետարական դիկտատուրայի ուղիներն ու մեթոդները գիտենալու հսկայական ուժ են ընձեռում ամբողջ համաշխարհային պրոլետարիատին և համաշխարհային հեղափոխական շարժմանը :

Հախուսակ նեխած տրոցկիստական մարգարեների, վորոնք անվերջ կրկնում եյին սոցիալ-դեմոկրատական վորոճումները և մեզ կսրծանում եյին գուշակում, կուսակցությունը հասավ սոցիալիստական արտադրության հաղթանակին մեր յերկրում :

Տրոցկիստական մարգարեները գուշակում եյին, թե անխուսափելի յեն պրոլետարիատի ընդհարումները գյուղացիության հետ, գուշակում եյին սոցիալիստական հեղափոխության անխուսափելի կործանումը :

Լենինի-Ստալինի կուսակցությունը, հա-

խուսակ այդ նախագուշակումներին, կարողացավ ամբարտնաբել բանվոր դասակարգի դաշինքը գյուղացիության հետ՝ պրոլետարիատի դեկտատուրայի, կարողացավ գյուղացիությանը դուրս բերել սոցիալիզմի ճանապարհի վրա :

Իրա շնորհիվ գյուղացիության հսկայական ճնշող մեծամասնությունը միացավ կազմեց կոլտնտեսություններ և պրոլետարիատի հետ ձեռք-ձեռքի տված կառուցում ե սոցիալիզմ :

Տրոցկիստները պնդում եյին, թե կուսակցությունը դեմ կառնի մեր յերկրի տեխնիկական հետամնացությունը, և հեղափոխությունն անխուսափելիորեն կկործանվի :

Լենինի-Ստալինի կուսակցությունը, ճիշտ իրագործելով սոցիալիստական ինդուստրացման քաղաքականությունը, ստեղծեց տեխնիկական նոր բազա, մեր յերկիրը դարձրեց ինդուստրիալ յերկիր և այդ հիմքի վրա վերապինում ե եկոնոմիկայի բոլոր ճյուղերը :

Լենինի—Ստալինի կուսակցութիւնը սոցիալիզմի հաղթանակը ձեռք բերեց ջախջախելով վոչ միայն տրոցկիզմը, այլև հակալենինյան կուսակալին աջ թեքումը, վորն ներկայացուցիչները, յերազելով «հանդարտ ու սահուն» զարգացման մասին, սոցիալիզմի մեջ կուլակի խողաղ ներածման մասին, լատ եյության դիմում եյին կապիտուլացիայի բուրժուադիայի առջև, պրոլետարիատի վճռողական դիրքերի հանձնմանը, ինդուստրացման ու կոլեկտիւացման այն քարտաքականութեան վերացմանը, վորն ապահովեց սոցիալիզմի հաղթանակը:

Յեւ յերբ ընկերները դնում են այն հարցը, թե ի՞նչ է լինելու հետո, յերբ մենք կատարած կլինենք յերկրորդ հնգամյակի հիմնական խնդիրը, սոցիալիստական հասարակութեան կառուցումը, այդ բանից հետո մենք դեպի ո՞ւր ենք առաջ շարժվելու,—կարող է լինել միայն մի պատասխան. մենք առաջ ենք դնալու դեպի կոմունիզմ: Այդպէ՛ս և միմիայն այդպէ՛ս կարող է

պատասխանել կոմունիստական կուսակցութեան անդամը:

Յեւ այդ առաջընթացը սոցիալիստական հասարակութեան պայմաններում, ամբողջ յերկրում սոցիալիստական արտադրութեան գոյութեան պայմաններում կկատարվի շատ ու շատ ավելի արագ, քան մինչև այժմ:

«Բայց թե վորքա՞ն արագ առաջ կգնա այդ զարգացումը,—ասում է Լենինը,—վորքա՞ն արագ նա կհասնի աշխատանքի բաժանման վերացմանը, մտավոր ու Ֆիզիկական աշխատանքի միջև յեղած հակադրութեան վոչնչացմանը, մինչև «աշխատանքը կենսական առաջին պահանջմունք դառնալը», այդ մենք չգիտենք և չենք կարող կիմանալ»<sup>1</sup>:

Պարզ է միայն մի բան, վոր այդ զարգացումը տեղի կունենա այլ տեմպերով և

<sup>1</sup> Լենին, հ. XXI, էջ 436, ուսու. 2-րդ հր.

այլ ձևերով, քան նա մինչև այժմ ընթացել է պրոլետարական զիկտատուրայի նախորդ ժամանակաշրջանում :

Այն ժամանակ մենք ունեյինք դասակարգային կռիւի հակայական դժվարութիւններ, բուրժուազիայի, կալվածատերերի և կուլակների զինադրութիւնը՝ քաղաքացիական պատերազմի, խնտերվենցիայի, ապստամբութիւնների ձևով, դավադրութիւնների, սաբոտաժի, վնասարարութիւն, տեռորիստական մահափորձերի ձևով. այն ժամանակ կիրառվում և դուգորդվում էին ամենասուր, ամենահուսահատական, ամենախորամանկ միջոցներն այն պայքարում, վոր մահացող, շահագործողական դասակարգերը մղում էին պրոլետարիատի դեմ, նրա կրուսակցութիւն և նրա պետութիւն դեմ :

Մոտ ապագայում — վաղվան որը—մենք կունենանք անդասակարգ սոցիալիստական հասարակութիւն, վորտեղ չի լինի դասակարգային կռիւ, վորտեղ կկատարվի կա-

պիտալիզմից մեղ ժառանգութիւն մնացած ստանձին այլասերվածների, խուլիգանների սանձահարումը, վորտեղ գլխավոր խընդիրը կլինի՝ դաստիարակել սոցիալիստական հասարակութիւն կառուցողներ և պաշտպանել արտաքին կապիտալիստական շրջապատից : Պարզ է, վոր այդ հասարակութիւն մեջ դեպի կոմունիզմը կատարվող պարզացումն ավելի արագ կընթանա և ավելի մասսայական բնույթ կկրի :

Պրոլետարական զիկտատուրայի անցյալ ժամանակաշրջանում պրոլետարիատի համար հակայական դժվարութիւն եր ստեղծում մանր արտադրութիւն զերակչումը, միլիոնավոր անհատական դուղացիական տնտեսութիւնների առկայութիւնը, վորոնք ամեն որ, ամեն ժամ կապիտալիզմ էին ծնում :

Արդեն ներկայումս սոցիալիստական արտադրութիւնը դառնում է ՆՍՀՄ-ում արտադրութիւն համարյա միակ ձևը (բացառութիւն անհատական դուղացիական սակավաթիւ տնտեսութիւնների) :

Պարզ է, վոր սոցիալիստական արտա-  
դրութեան առաջելութուններն այժմ ար-  
տահայտվելու յեն ե՛լ չափելի մեծ չարիով,  
մեր յերկրի զարգացումն ու աճումն առաջ  
են զնալու ե՛լ սովելի արագ տեմպով:

Մեր յերկրի տեխնիկական հետամնացու-  
թյունը, իմպերիալիստական և քաղաքացիա-  
կան սրատերտղմի հետևանքով առաջացած  
ամենադժնդակ քայքայումը ամենադժվարին  
խոչընդոտն է յին հանդիսանում դեպի սո-  
ցիալիզմը մեր կատարած առաջընթացում:  
Մեր կրթակցութունը հաղթահարեց նաև  
այդ խոչընդոտը: Նա ստեղծեց յերկրում  
հզոր սոցիալիստական ինդուստրիա, վորը  
վերադիմում է տնտեսութեան բոլոր ճյու-  
ղերը, վորը նոր տեխնիկա տվեց կոլանտե-  
սություններին ու խորհրտնտեսություննե-  
րին: Կուսակցութունը սոցիալիզմի համար  
ստեղծեց ժամանակակից գիտութեան մա-  
կարդակի վրա գտնվող հզոր տեխնիկական  
քաղա: Այդ է մեր չափելի արագ առաջըն-  
թացի յերաշխիքը:

Այդպիսով, լիակատար սոցիալիստական  
հասարակութուն կառուցելու խնդիրը կա-  
տարելուց հետո մենք չունենք և չենք կա-  
րող ունենալ անհաղթահարելի և վոչ մի  
արդեւք հետագա առաջընթացի համար՝  
դեպի կոմունիզմ:

Ի՞նչպես և ի՞նչ ուղիներով է կատարվե-  
լու այդ առաջընթացը, ի՞նչ ժամկետներ ե՞ն  
անհրաժեշտ դրա համար,—վոչ վոք չի  
կարող այժմ այդ ասել, վոչ վոքի չի վի-  
ճակված իմանալ այդ:

Այդպիսի հարց քննարկելիս պարտադիր  
է հաշիւ առնել պատմական հեռանկարը:

Տնտեսութեան բոլոր ճյուղերում մեր հա-  
ջողութունները հսկայական են: Բայց մենք  
դեռևս տեխնիկական-տնտեսական տեսակե-  
տից չենք հասել ու չենք անցել կապիտա-  
լիզմի այնպիսի առաջավոր յերկրից, ինչ-  
պիսին է Ամերիկայի Միացյալ Նահանգ-  
ները: Մեր առջև դրված են հսկայական  
խնդիրներ, այն ե՛լ ե՛լ սովելի զարգացնել  
սոցիալիստական ինդուստրիան, մետալուր-

գիտան, մեքենաշինությունը, եներգետիկան, քիմիան: Թեթև արդյունաբերությունը դեռ նոր է թեևակոխում արագ վերելքի շրջանը, դյուրատնտեսությունը նոր է սկսել իր վաղըը: Իսկ դեռ վորքա՞ն բան կա ա- նելու տրանսպորտի բնազավառում: Մի՞թե պարզ չէ, վոր մենք դեռևս վիթխարի աշ- խատանք ունենք կատարելու, վոր մենք դեռևս պետք է վերապրենք նոր մեծ աշխա- տանքներին, նոր հոյակապ կառուցումներին պատմական ժամանակաշրջանը, պետք է ստեղծենք նոր ճյուղեր, բարձրացնենք ու յուրանցնենք մեր լայնածավալ հայրենիքին նոր շրջանները, վորպեսզի մոտենանք այն աստիճանին, յերբ հանրային հարստության բոլոր աղբյուրները կհոսեն հորդաոտ կերպով և կարելի կլինի անցնել ըստ պա- հանջմունքների բաշխելու դործին:

Սորհրդային պետությունը, վորն այժմ լիակատար իրավունքով արդեն կարող է կոչվել սոցիալիստական պետություն, պետք է հսկայական աշխատանք կատարի

սոցիալիստական հասարակություն կառու- ցողներին վորակավորումը, գիտելիքները, կուլտուրականությունը բարձրացնելու հա- մար, վորպեսզի հասարակությունը կարո- դանա մոտենալ մասվոր ու ֆիզիկական աշ- խատանքի միջև գոյություն ունեցող հակա- դրության վոչնչացմանը:

Այնուհետև, անհրաժեշտ է դարդացնել ու բարելավել խորհրդային առևտուրը, ձգտել, վորպեսզի նա դառնա կուլտուրա- կան, անհրաժեշտ է դուրս մղել մեր առև- տրական ու կոոպերատիվ կազմակերպու- թյուններից չարչիության վողին, սպառող- ներին ցույց տրվող անհոգի-բյուրոկրատա- կան վերաբերմունքը, հարկավոր է սովո- բեցնել նրանց՝ հարգել սոցիալիստական յերկրի քաղաքացու պահանջմունքները, ճաշակն ու ցանկությունները և կուլտուրա- կան կերպով բավարարել այդ պահանջ- մունքները:

Մեզ դեռևս անհրաժեշտ է անցնել տնտեսական հաշվարկի, խորհրդային ուրբ-

լով վերահսկելու և միանձնյա ղեկավարման յերկարատե լավ դպրոցը, վորպեսզի սովորենք բոլոր բնագավառներում սնտե-սավարել ուրինակելի կերպով, սոցիալիստականորեն :

Վերջապես, մենք պետք է անցնենք խորհրդային դեմոկրատիայի պատմական մի ամբողջ շրջան, վարժվենք հարգել առ կատարել խորհրդային որենքները, նորմաները, կանոնները, սովորենք հարգել մեր պարտականությունները, սոցիալիստական յերկրի քաղաքացու արժանիքն ու պատիվը, անցնենք բոլորին բարեխղճության վոգով դաստիարակելու յերկարատե դպրոցը, վորպեսզի մոտենանք առանց պետության հասարակությանը, լիակատար կոմունիզմին :

Մարդկանց գիտակցության մեջ դոյու-թյուն ունեցող կապիտալիզմի մնացուկնե-րը, հին սովորություններն ու վարժու-թյունները դեռևս իրենց մասին հիշեցնում են ամեն կողմից : Յե՛վ դեռ շատ պետք է աշխատենք, վորպեսզի քերենք մաքրենք

մեր վրայից հին հասարակության կեղտոտ բծերը :

Այստեղ վուչ մի պատրանք չի կարելի ստեղծել : Հանցագործություն կլինեք ասել, քե անցումը դեպի կոմունիզմ կսկսվի վա-զր : Պետք է պարզ տեսնել հեռանկարը, միջանկյալ աստիճանները, վորոնք դեռ անհրաժեշտ է անցնել, և աշխատանքի պատմական քափն ու ծավալը :

Հարկավոր է հաստատապես հիշել, վոր այդ հետագա դարգացումը, այդ անցումն ինքն իրեն չի իրագործվի, վոր ղժվարու-թյուններ և այն էլ մե՛ծ ղժվարություններ են լինելու նաև այդ նոր ճանապարհին, վոր այդ աշխատանքի թափն ու ծավալը մարդկային յերեակայությունից վեր է և անհրաժեշտ կլինի ե՛լ ավելի կատարելա-գործել սոցիալիզմի կառուցման կազմակեր-պումն ու ղեկավարումը :

Այդ պատճառով անհրաժեշտ է պայքար մղել ոպորտունիստների դեմ, նրանց դեմ, ովքեր, ընկեր Ստալինի արտահայտու-թյամբ, համակվում են

«Տորթի հրճվանքով, սպասելով այն բանին, թե շուտով վոչ մի դատակարգ չի լինի, — նշանակում է դատակարգային կռիվ չի լինի, — նշանակում է հոգսեր ու հուզումներ չի լինի, — նշանակում է կարելի չե գենքը ցած դնել և քնալ քնելու, սպասելով անդատակարգ հասարակության գալստյանը»<sup>1</sup> :

Մեր կուսակցութիւնը դեպի կոմունիզմը կատարվող առաջընթացի իր խնդիրները լուծել է և լուծում է մարտականորեն կադմակերպելով ու միացնելով պրոլետարիատի և բոլոր աշխատավորների բովանդակ ուժերը, բուլչեիկյան համառությամբ, կարողանալով բարձրացնել յուրաքանչյուր ամենահետամնաց աշխատավորի ու պարզաբանել նրան, թե ի՞նչպես և ի՞նչ ճանապարհով կարելի չե հաղթանակ ձեռք բերել, նրանով, վոր կարողանում է տեսնել

<sup>1</sup> Ստալին, Լենինի գծի հարցերը, էջ 531, ուսու. 10-րդ հրատ.:

բոլոր միջանկյալ աստիճանները և դրանցից յուրաքանչյուրի խնդիրների յուրակերպութիւնը :

Ինքնահոսքը յեղել է և մնում է վորպես մեր ամենավտխերթ թշնամին, վորի դեմ մենք կռվելու յենք մի նշև վերջը, նաև սոցիալիզմի ժամանակ :

Վորոշ ընկերներ հարց են տալիս. — կարո՞ղ ենք արդյոք մենք զարգանալ դեպի կոմունիզմը և կառուցել այն, յեթե մեր յերկրի սահմանների մյուս կողմում մնա մեզ թշնամի կապիտալիստական շրջապատը : Կկարողանա՞նք արդյոք մենք այն ժամանակ յուր քնալ առանց պետության և առանց բանակի, վորն այդ պետության դործիքն է հանդիսանում :

Սյը հարցին մենք պատասխան ունենք այն ճառում, վորը կոմիսսերի Գործկոմի VII պլենումում արտասանել է ընկեր Ստալինը .

«...Տեսականորեն միանգամայն կարելի  
յե յենթադրել հասարակութեան այնպիսի  
վիճակ, յերբ չկան դասակարգեր, չկա  
պետութիւն, սակայն կա զինված ժողո-  
վաւրդ, վորն իր անդամակարգ հասարա-  
կութիւնը պաշտպանում ե արտաքին թշ-  
նամիներից: Սոցիոլոգիան բավականաչափ  
որինակներ ե տարիս, վոր մարդկութեան  
պատմութեան մեջ յեղել են հասարակու-  
թիւններ, վորոնք դասակարգեր չեն ու-  
նեցել, պետութիւն չեն ունեցել, բայց,  
այսպէս կամ այնպէս, պաշտպանուել են  
արտաքին թշնամիներից: Նույն բանը  
պետք ե ստել ապագա անդամակարգ հա-  
սարակութեան մասին, վորը չունենալով  
դասակարգեր ու պետութիւն, սակայն և  
այնպէս կարող ե՝ արտաքին թշնամիներից  
պաշտպանուելու համար ունենալ անհրա-  
ժեշտ սոցիալիստական միլիցիա: Յես քիչ  
համարական եմ համարում, վոր մեզ մոտ  
գործը կարողանա հասնել այդպիսի դրու-  
թեան, վորովհետեւ կասկածից վեր ե, վոր

մեր յերկրում սոցիալիստական շինարար-  
ութեան հաջողութիւնները, մանավանդ  
սոցիալիզմի հաղթանակը և դասակար-  
գերի վոչնչացումը, — սրանք համաշ-  
խարհային-պատմական նշանակութիւն  
ունեցող այնպիսի փաստեր են, վո-  
րոնք չեն կարող դեպի սոցիալիզ-  
մը հզոր մղում չառաջացնել կապի-  
տալիստական յերկրների պրոլետարների  
մեջ, վորոնք չեն կարող հեղափոխական  
պոթենցիալներ չառաջացնել մյուս յերկր-  
ներում: Սակայն տեսականորեն միանգա-  
մայն կարելի յե յենթադրել հասարակու-  
թեան այնպիսի վիճակ, վորի պայմաննե-  
րում հնարավոր ե սոցիալիստական միլի-  
ցիայի դոյութիւնն առանց դասակարգերի  
ու պետութեան առկայութեան:

Ասենք՝ այս հարցը վորոչ չափով լու-  
սաբանված ե մեր կուսակցութեան ծրա-  
դրում: Ահա թե ինչ ե ասված այնտեղ.—

«Կարմիր բանակը, վորպէս պրոլետարա-  
կան դիկտատուրայի գործիչ, անհրաժեշ-

տորեն պետք է ունենա բացահայտ դասակարգային բնույթ, այսինքն՝ պետք է կազմավորվի բացառապես պրոլետարիատից և նրան մերձավոր կիսապրոլետարական գյուղացիական խավերից: Միայն դասակարգերի վաչնչացման կապակցությամբ այդպիսի դասակարգային բանակը կվերածվի համաժողովրդական առցիալիստական միլիցիայի» (տե՛ս Համկ(բ)Կ ծրագրերը)»<sup>1</sup>:

Ընկեր Ստալինի այս խոսքերը լիովին սպառնում են հարցը: Դրանով ել կարելի չե վերջացնել մեր հոգւթածը:

<sup>1</sup> Ստալին, Ժողովածու ողորդեցիայի մասին, Էջ 532—533, սուս. հր.: Եղադիրը մերն եւ — Մ. Ս.




Պատ. խմբ. Տ. Խորունի, թարգմ. Հ. Տ.-Հովհաննիսյան  
սրբագրել է Ս. Մկրտչյան, տեխն. խմբ.  
Տ. Խաչվանքյան


Գրավիտի լիտոյր № 1058, հրատ. № 362,  
պատվեր № 126, տիրոժ 10,000 էնդերս  $\frac{\text{II-84}}{\text{HK}}$

Հանձնված է արտադրության 31 / III 1936 թ.  
ստորագրված է արտադրության 15 / IV 1936 թ.

Գինը 60 կ.

Հայկուսերաթի սպարսն, Յերեվան Ալլահվերդյան № 27





« Ազգային գրադարան



NL0183170

9158 60 6



**А. СТЕЦКИЙ**  
**СОЦИАЛИЗМ И КОММУНИЗМ**  
**АРМПАРТИЗДАТ, ЕРИВАНЬ**